# ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ԱՆՏՈ՛Ն ՔՈՉԻՆՅԱՆԻՆ

Ապրիլի 6-ին, երկուշաբթի օր, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը Կառավարական Տան մեջ այցելություն տվեց Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Նախագահ պր. Ա. Քոչինյանին։

Ընդունելությանը ներկա էին նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Սարգիս Գասպարյանը և խորհրդի նախագահի տեղակալ պր. Սուրեն Հովհաննիսյանը։

Վեհափառ Հայրապետի և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Նախագահ պր. Ա. Քոչինյանի միջև տեղի ունեցավ զրույց Եկեղեցու գործունեության հետ կապված հարցերի շուրջ։

Վերջում Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, հրաժեշտ առավ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Նախագահ պր. Ա. Քոչինյանից։